ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

04.03.2026թ.Ք. Արարատ

2026 թվականի մարտի 4 - ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արարատի համայնքապետարանում տեղի ունեցավ հանրային լսում: Օրակարգում՝ **«ԱՄՐՈՑԱՔԱՐ»** ՍՊ ընկերության կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ 1-ին հանրային լսումը:

Հանրային քննարկման ընթացում, որը տեսաձայնագրվում էր, մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Բաղդասարյանը, ապա խոսքը տրամադրվեց **«ԱՄՐՈՑԱՔԱՐ» ՍՊ** ընկերության ներկայացուցիչ՝ Գ. Հակոբյանին:

Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը ներկաներին տեղեկացրեց, որ լսումներին ներկա է նաև **«ԱՄՐՈՑԱՔԱՐ» ՍՊ** ընկերության տնօրեն Դ. Դավդյանը և ներկաները հարցադրումները կարող են ուղղել նրան նույնպես: Գ. Հակոբյանը հայտնեց, որ ընկերությանը 20 տարի առաջ տրամադրվել է օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք, որի ժամկետը ավարտվում է 2026 թվականի ապրիլի 26-ին: Նա տեղեկացրեց, որ այս քննարկումները վերաբերվում են ընդերքօգտագործման իրավունքի գործընթացին, հանգամանալից ներկայացրեց լսումների ու դրա հետագա ՇՄԱԳ փորձաքննական գործընթացի ընթացակարգը, առաջնային ուշադրություն դարձնելով հանքավայրի շահագործման ընթացքում փոշու ցրման, սանիտարական գոտու հեռավորությանը, առկա ճանապարհների վերանորգմանը, դրանց շահագործման արդյունքում առաջացած փոշու նվազեցմանը ուղղված միջոցառումներին և սոցիալական ծրագրերի մասնակցությանը: Նա հայտնեց, որ ներկայումս նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում, պահպանելով բոլոր բնապահպանական նորմերը և սանիտարական գոտու հեռավորությունները ենթակառուցվածքներից և բնակելի շինություններից: Նա նշեց, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում վճարվելու են պետական հարկեր ու տուրքեր, հողի վարձակալության վճարներից համայնքի բյուջե մուտքագրվելու են ավելի շատ գումարներ:

Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց նաև ՀՀ Արարատ համայնքի ազդակիր ներկայացուցիչների կողմից բարձրացված մի շարք հարցերին: Հարցերը

հիմանականում վերաբերվում են բնակավայրին, աշխատատեղերին, առկա ճանապարհների օգտագործմանը, հանքավայրի տեղադիրքին, անվտանգությանը, շահագործվող տեխնիկաների գերբեռնվածությանը և մաքրությանը, նոր ստեղծվող աշխատատեղերին, ինչպես նաև սոցիալական ծրագրերի ուղղվածությանը և համայնքում ներդրումների իրականացմանը: Ընկերության ներկայացուցիչ Գ. Հակոբյանը պատասխանեց հնչեցրած հարցերին՝ հաստատեց որ իր կողմից պարզաբանված այդ բոլոր հարցերի պատասխանները և լուծումները ներառված կլինեն լիազոր մարմնին ներկայացվող փաթեթում և դրական արդյունքի դեպքում ընկերության կողմից միանշանակ կիրականացվեն:

Եղավ մտքերի փոխանակություն:

«ԱՄՐՈՑԱՔԱՐ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Գուրգեն Հակոբյանը հայտնեց, որ նախատեսվում է ստեղծել լրացուցիչ նոր աշխատատեղեր միջինը 150000 դրամ ամսեկան աշխատավարձով և ներգրավվող աշխատողների զգալի մասը կլինեն ՀՀ Արարատ համայնքի ազդակիր բնակավայրերի բնակիչներից :

Հանրային քննարկումների արդյունքում և հաշվի առնելով լսման մասնակիցների կարծիքները ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Բաղդասարյանը հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը:

Ազդակիր բնակավայրի լսումների ընթացքում հնչեցրած կարծիքը կքննարկվի և նախնական համաձայնության դեպքում՝ **«ԱՄՐՈՑԱՔԱՐ»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրի Ամրոցասարի տեղամասում կատարվելիք օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ ավագանու որոշման արդյունքում կտրվի նախնական համաձայնություն:

ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. Բաղդասարյան

«ԱՄՐՈՑԱՔԱՐ» ՍՊԸ-Ի

Տնօրեն՝ Դ. Դավդյան